



«Դիվիզանի կենտրոնական դպրոց» կրթական հիմնադրամ  
ք. Դիվիզան 3905, Մոլդովական 77  
Հեռ.՝ + 374 10 592762, + 374 94 543707  
Էլփոստ՝ [welcome@dcs.am](mailto:welcome@dcs.am)  
Կայքէջ՝ [www.dcs.am](http://www.dcs.am)

### Ընդունելության թեստ

#### Մաթեմատիկա 5-րդ դասարան

Անուն, ազգանուն \_\_\_\_\_ ամիս, ամսաթիվ \_\_\_\_\_

1. Գտնել ամենափոքր եռանիշ և ամենամեծ երկնիշ թվի գումարը: [5]
2. Գտնել 245-ից փոքր ամենամեծ թիվը, որի միավորների կազմում գրված է 7: [5]
3. Լրացնել բաց թողած փակագծերն այնպես, որ ստացվի հավասարություն: [10]

$$5 \cdot 4 + 3 \cdot 6 = 110$$

4. Միքայելի տարիքը 4-ով փոքր է իր 10 տարեկան քրոջ տարիքից և 2 տարով մեծ է եղբորից: Եղբոր տարիքը 8 անգամ փոքր է հոր տարիքից: Քանի՞ տարեկան է Միքայելի հայրը: [10]

5. Պնդումներից յուրաքանչյուրի դիմաց նշել՝ ճի՞շտ է, թե՞ սխալ: [5]
  - 1) 0-ն փոքր է ցանկացած բնական թվից: \_\_\_\_\_
  - 2) Թիվը 1-ի բաժանելիս ստացվում է նույն թիվը: \_\_\_\_\_
  - 3) Բնական թիվը 0-ով բազմապատկելիս ստացվում է նույն թիվը: \_\_\_\_\_
  - 4) Եթե բնական թվին գումարենք 1, ապա կստանանք հաջորդ բնական թիվը: \_\_\_\_\_
6. Ճոպանուղում օրական կատարվում է 20 ուղերթ: Քանի՞ մարդ կարող է օգտվել ճոպանուղուց 1 շաբաթում, եթե խցիկում տեղավորվում է 15 մարդ: [10]

7. Չափման միավորներն արտահայտել մեկը մյուսով: [10]

- A) 1սմ = \_\_\_\_\_մմ                      B) \_\_\_\_\_ժ=3600վ                      C) 90մմ = \_\_\_\_\_սմ  
D) \_\_\_\_\_վ = 12ր                      E) \_\_\_\_\_սմ = 2մ                      F) 120ր = \_\_\_\_\_ժ  
G) \_\_\_\_\_մ = 11կմ                      H) 2օր = \_\_\_\_\_ժ

8. Արտահայտել. [10]

- A) Գրամներով՝ 3ց 8կգ \_\_\_\_\_  
B) մետրերով՝ 5կմ 307մ \_\_\_\_\_  
C) վայրկյաններով՝ 1օր 52վ \_\_\_\_\_

9. BM ճառագայթը ABC փոկած անկյունը տրոհել է երկու անկյունների, որոնցից մեկը մյուսից մեծ է երեք անգամ: Գտնել այդ անկյունների մեծությունները: Գծել փոկած անկյունը, փոխադրիչի միջոցով կառուցել ստացված անկյունները, անվանել այդ անկյունները և դրանց դիմաց գրել տեսակները: [15]

10. Կիրառելով բազմապատկման և բաժանման հատկությունները՝ հաշվումներ կատարել հարմար եղանակով: [10]

- A)  $769 \cdot 27 + 769 \cdot 73 =$   
B)  $5 \cdot 157 \cdot 2 =$   
C)  $(83 \cdot 26) : 13 =$   
D)  $(777 + 287) : 7 =$

11. Գտնել բաժանելին, եթե բաժանարարը 4 է, թերի քանորդը՝ 8, իսկ մնացորդը՝ 3: [10]

